ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 1 -Լ

«23» 01 2023թ. ք. Երևան

««ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԱՐԱՏԻ ՈՍԿՈՒ ԿՈՐԶՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏԻ ՊՈՉԱՄԲԱՐԻ ՊԱՏՎԱՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի հունվարի 13-ի N 23-Լ հրամանով հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) Փրկարար ծառայության կանոնադրության 20-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արտակարգ իրավիճակների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1308-Լ հրամանով հաստատված «Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության 2023 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի հավելվածի 1.2.1 կետի կատարումն ապահովելու նպատակով 2023 թվականի մարտի 29-ին ՆԳՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչությունում անցկացնել ««Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ին պատկանող Արարատի ոսկու կորզման կոմբինատի պոչամբարի պատվարի

փլուզման դեպքում Արարատ քաղաքի բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՈՒսումնավարժություն):

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել ՆԳՆ Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության պետ, փ/ծ գնդապետ Գուրգեն Մարտիրոսյանին:

3. Ստեղծել ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբ և շտաբի աշխատանքային խմբեր՝ հետևյալ կազմերով՝

1) ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ-ղեկավարի տեղակալ՝ ՆԳՆ Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի պետ, փ/ծ գնդապետ Նվեր Մարգարյան.

2) խաղարկման խումբ՝

ա. ՆԳՆ Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ Միեր Բաբաջանյան (խմբի ղեկավար),

բ. ՆԳՆ Փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի նվազեցման վարչության տեխնածին վթարների բաժնի հրահանգիչ, փ/ծ կապիտան Անահիտ Գալստյան,

3) վերլուծության նախապատրաստման խումբ՝

ա. ՆԳՆ Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի անձնակազմ:

4. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) ՆԳՆ Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության ծառայողներին,

2) Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին (համաձայնությամբ),

3) Պոչամբարը սպասարկող կազմակերպության ներկայացուցիչներին (համաձայնությամբ):

5. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ-ղեկավարի տեղակալին՝ ապահովել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի ժամանակին

մշակումը և մինչև ս.թ. հունվարի 27-ը ներկայացնել հաստատման՝ ուսումնավարժության ղեկավարին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

7. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Недействительная подпись

X

ԿԱՄՈ ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Подписано: TSUTSULYAN KAMO 1201730260 **Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**